ԶՈՐԱՎԱՐՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԸ

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ» ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ սփյուռքի նախարարության, Երևանի պետական համալսարանի և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված «Գարեգին Նժդեհի գործունեությունը սփյուռքում» գիտաժողովը՝ նվիրված մեծ զորավար և գաղափարախոս Գարեգին Նժդեհի 125-ամյակին:

Բացելով այն՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն *ասաց, որ «Գարեգին Նժդեհը քչերից մեկն է, հատկապես XIX դարավերջի մեր իրականության մեջ ասպարեզ իջած գործիչների սերնդում, որն առանձնանում է իր, հիրավի, հանրագիտարանային իմացությամբ ու գործունեությամբ: Նա այն քչերից մեկն է, ովքեր XX դարում կարողանում էին ամենատարբեր ոլորտներում իրենց տաղանդի հզորությամբ նոր ու թարմ խոսք ասել, նոր շունչ բերել: Նրա գործունեությունը անջնջելի հետք թողեց մեր հետագա ամբողջ պատմության վրա:*

Ուզում եմ հիշեցնել մեր հանրապետության նախագահի այն խոսքերը, որ մենք չէ, որ պիտի լինենք նրան գնահատական տվողը. նրան գնահատել է պատմությունը, նրան գնահատում է մեր ամբողջ ժողովուրդը, նրա գնահատականի ամենահաստատուն պատվանդանը մեր երկրի ու մեր ժողովրդի հետագա գործունեությունն ու զարգացումը պիտի լինի»:

Ա. Սիմոնյանի գնահատմամբ, Գ. Նժդեհը մեծ լումա ունի այսօրվա մեր պետականության կազմավորման համար: Հարցն այն է, որ նրա ամբողջ գործունեությունը կարմիր թելի պես անցնում է այսօրվա մեր բանակաշինության, այսօրվա մեր պետության ներքին ու արտաքին քաղաքականության միջով: «Ամեն տեղ՝ գրիչը վերցնելուց սկսած մինչև մաուզերը վերցնելը, նա եղել է առաջամարտիկ, եղել է առաջին գծում. կարդալով նրան, զարմանալ կարելի է, թե մի՞թե այդ բոլորը ստեղծել է մեկ մարդ: Ստիպված լինելով թողնել հայրենիքը և անցնելով Պարսկաստան, ապա՝ Եվրոպա, նա չկորավ տեսադաշտից որպես գաղափարախոս ու քաղաքական գործիչ, այլ, ընդհակառակը, նոր գույներով նա հանդես եկավ որպես վառ անհատականություն և որպես գաղափարախոս և, որ ամենակարևորն է, որպես իր ժողովրդի սիրեցյալ զավակ: Որտեղ էլ նա եղավ, որ երկրում էլ ապրեց, ԱՄՆ-ից մինչև Ռուսաստանի բանտեր, նրա աչքի առաջ իր սուրբ հայրենիքն էր, իր սիրած Երևանը, իր սիրած Զանգեզուրն ու Արարատ սարը:

Նա սփյուռքում չարեց ոչինչ, որի համար մենք այսօր ամաչելու լինենք: Նրա ամբողջ գործունեությունը միտված էր միայն մեկ բանի՝ գերագույն նպատակ ունենալով հայի և հայ ժողովրդի հավաքական - ֆիզիկական

պահպանումը, որի համար միշտ պատրաստ էր: Նրա հայրենասիրությունը չուներ սահման,– ասաց հռետորը, ավելացնելով.– Մենք որպես ժողովուրդ պիտի միշտ հպարտ լինենք, որ Գարեգին Նժդեհի նման անձնավորություն ենք ունեցել, որ հայ ժողովրդի արգանդը ծնել է նրա նման զավակ»:

Գիտաժողովը ողջունեց ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, *նշելով, որ 2011 թվականը հոբելյանական տարի էր ամբողջ հայության համար, որովհետև տոնում ենք մեր անկախ պետականության 20-րդ տարեդարձը, ինչպես նաև՝ մեծ հայի, մեծ հայրենասերի, ազգային գաղափարախոսության ջատագով Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակը: Նժդեհի գործունեությունը սփյուռքում ուներ մեկ նպատակ. ազգային աղետից հետո՝ մեծ ցեղասպանությունից հետո դաստիարակել մի սերունդ, որի մեջ հաստատվի նաև վրեժի գաղափարը, ապա՝ լինի այնպիսի հայրենասեր սերունդ, որը կարողանա տեր կանգնել իր իրավունքներին, իր հայրենիքին, և վառ պահել այն հիշատակը, որ այդ հայրենիքը ժամանակավոր է կորսված, այդ հայրենիքը մերն է՝ ինչքան էլ որ քոչվորներն այնտեղ ապրեն: Որովհետև այն մեր պապենական հողն է:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը *այն հանգամանքը կարևորեց, որ Գարեգին Նժդեհի գործունեությունը գնահատելիս պիտի ելնենք ոչ թե նրա՝ կուսակցական պատկանելիության դիրքերից, այլ՝ ընդհանուր, համազգային, համահայկական դիրքերից: Նա պետականություն էր կերտում, Զանգեզուր էր պահպանում Խորհրդային Հայաստանի սահմաններում՝ քաջ գիտակցելով, որ իր հեռանալուց հետո այն մնալու է Խորհրդային Հայաստանի կազմում, անկախ նրա տեսքից ու գույնից: Այսպես նա հասկացավ ժամանակի ոգին:*

Գիտաժողովում հրապարակվեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի *ուղերձը:*

Գիտաժողովի չորս նիստերում քննարկվեցին «Հայապահպանության, ազգային ինքնության և դաստիարակության հարցերը Գարեգին Նժդեհի գաղափարախոսության մեջ», «Գործնականը և գաղափարախոսականը Գարեգին Նժդեհի սփյուռքյան գործունեության մեջ», «Գարեգին Նժդեհ. զորավարը և մտածողը», «Գարեգին Նժդեհը՝ մանկավարժի և ուսանողի տեսանկյունից» թեմաները:

Ներկայացվեցին դրվագներ Գարեգին Նժդեհի սփյուռքյան գործունեությունից, ինչպես նաև՝ նրա դիտարկումները Հայաստանի ապագայի, ազգային ինքնության պահպանման հիմնահարցի, տնտեսագիտության և հայության տնտեսական կյանքի կազմակերպման վերաբերյալ և այլն:

Զեկուցումներով հանդես եկան մեկ տասնյակից ավելի գիտնականներ՝ ներկայացնելով մեծ հայորդու կյանքի և գործի տարբեր ասպարեզներ:

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆ

«Հայաստանի Հանրապետություն», 16. XII. 2011